ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19Ա

01.11.2024թ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածը՝ Ձեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազը մեկ քառորդի պահանջը՝ հասարակական հետաքրքրություն ներկայացնող՝ ««Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների վերաբերյալ» հրատապ թեմայով՝ 2024թ. նոյեմբերի 12-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի երեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում քննարկում անցկացնելու վերաբերյալ:

Հասարակական հետաքրքրություն ներկայացնող նշված հարցի (թեմայի) քննարկման կարևորությունը, առաջնայնությունը և հրատապությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության ժողովրդի դեմ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 4-ը իրականացված լայնածավալ ռազմական ագրեսիայի հետևանքով ամբողջ արցախահայությունը ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ ստիպված եղավ լքել իր պատմական հայրենիքը, որտեղ հայկական քաղաքակրթական ժառանգությունը ունի հազարամյակների պատմություն: Բաքվի ռեժիմի կողմից ցեղասպան քաղաքականությամբ իրականացված արցախահայության զանգվածային բռնի տեղահանումը միջազգային իրավունքի կոպտագույն խախտում է: Ադրբեջանական ագրեսիայի և արցախահայության բռնի տեղահանման հետևանքով ավելի քան մեկ տարի ապօրինաբար գերության մեջ են պահվում Արցախի Հանրապետության բազմաթիվ հայազգի քաղաքացիներ, իրենց տունն ու հայրենիքը պաշտպանող անձինք, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը: Բաքվի բանտում մեր հայրենակիցներին պահելն ու

խոշտանգելը ոչ միայն Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետևանք է, որի դրսևորումները չեն դադարում մինչև այժմ, այլև առկա բանակցային գործընթացում մարդկային կյանքերը, ազատությունն ու արժանապատվությունը որպես ճնշման միջոց օգտագործելու փորձ:

Այս պայմաններում, Բաքվում անցկացվելիք ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի» մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանի (COP29) անցկացմանը զուգընթաց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը պարտավոր է վերաբերմունք արտահայտել այս անմարդկային և միջազգային իրավունքի համաձայն դատապարտելի երևույթին՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով և ակնկալելով վերջինիս ազդեցության կիրառումը՝ պահանջելով Ադրբեջանից անմիջապես ազատ արձակել գերևարված և պատանդառված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանը և մյուս բոլոր հայ գերիներին:

Սույն պահանջը ներկայացնող պատգամավորների ներկայացուցիչն է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Աբրահամյանը (հիմնական զեկուցող):

Ազգային ժողովի պատգամավորներ՝

h/h	Անուն, ազգանուն		ստորագրություն
1.	Կարեն Դանիելյան	077	
2.	Գրիգորի Հարությունյան	082	
3.	Արմեն Գրիգորյան	073	
4.	Արտակ Զրուանդյան	080	
5.	Հայկարամ Գևորգյան	075	

6.	[illegible]	086	
7.	[illegible]	078	
8.	[illegible]	094	
9.	[illegible]	084	
10.	[illegible]	089	
11.	[illegible]	095	
12.	[illegible]	081	
13.	[illegible]	088	
14.	[illegible]	101	
15.	[illegible]	102	
16.	[illegible]	105	
17.	[illegible]	103	
18.	[illegible]	107	
19.	[illegible]	087	
20.	[illegible]	092	

21.	[illegible]	083	
22.	[illegible]	100	
23.	[illegible]	058	
24.	[illegible]	106	
25.	[illegible]	074	
26.	[illegible]	029	
27.	[illegible]	092	
28.	[illegible]	076	
29.	[illegible]	091	
30.	[illegible]	093	
31.			
32.			
33.			
34.			
35.			